Մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունն աշխարհում 2022 թվականին՝ ըստ երկրների

ՀԱՅԱՍՏԱՆ

1. Մարդու իրավունքների և ժողովրդավարության վիճակը վերաբերյալ ակնարկ. Մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում Հայաստանը համեմատաբար լավ ցուցանիշներ է պահպանել և 2022 թվականին շարունակել է դատական, ոստիկանական և սահմանադրական ոլորտներում բարեփոխումների ուղղությամբ հավակնոտ նախաձեռնությունները:

Հետագա բարելավումներ են անհրաժեշտ մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ խտրականության և ատելության խոսքի զսպում, հավաքների ազատություն, փոքրամասնությունների պաշտպանություն, գենդերային հավասարություն, գենդերային բռնության կանխում, ինչպես նաև ընտանեկան բռնության, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի հետաքննության ուղղությամբ:

Հայաստանի համար դեռևս լուրջ մարտահրավեր է անվտանգության վիճակը, քանի որ 2022 թվականի սեպտեմբերյան էսկալացիան ամենամահաբերն էր 2020 թվականի 44-օրյա պատերազմից ի վեր: Չնայած մարտահրավերներին՝ Հայաստանը հավատարիմ է իր հանձնառությանը՝ ապահովելու ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (*այսուհետ՝ ՀԸԳՀ*) կիրարկումը, որը ներառում է ժողովրդավարության և մարդու իրավունքների ամրապնդման վերաբերյալ դրույթներ: Համաձայն ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող e-rights.am հարթակի տվյալների՝ 2020-2022 թվականների Մարդու իրավունքների ազգային ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի 81տոկոսն իրականացվել է մինչև 2022 թվականի վերջը:

2. **ԵՄ գործողությունների առանցքային ուղղությունները**. Եվրոպական միությունը շարունակել է աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված մրջոցառումների իրականացմանը՝ ներդնելով քաղաքականության երկխոսություններին և օժանդակությանը միտված գործիքակազմեր, այդ թվում՝ աշխարհագրական և թեմատիկ գործիքներ, ինչպիսին է «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը» (ԺՄԻԵԳ): Մարդու իրավունքների պաշտպանության ազգային նոր ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մշակումը մեկնարկել է 2022 թվականի հուլիսին: ԵՄ-ն շարունակում է աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին:

ԵՄ-ն շարունակում է զգալի ջանքեր գործադրել դատական համակարգի և ոստիկանության ոլորտի հավակնոտ բարեփոխումներին աջակցելու նպատակով, մասնավորապես՝ «2022-2026 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարություն», «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր», «Քրեակատարողական և պրոբացիոն ծառայությունների 2019-2023 թվականների ռազմավարություն» և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարություն»:

Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի ընդունումը (գործում է 2022 թվականի հուլիսից) լուրջ բարելավում է քրեական արդարադատության ոլորտում՝ ապահովելով արդի քրեական արդարադատության համակարգ, որի հիմքում դրված է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը քրեական գործի յուրաքանչյուր փուլում:

Միաժամանակ, Եվրոպական միությունը շարունակել է բարձրաձայնել մարդու իրավունքների ոլորտում առկա մարտահրավերները և աջակցություն ցուցաբերել գենդերային հավասարության, ընտանեկան բռնության, դատական և քրեակատարողական համակարգի, խտրականության վերացման քաղաքականության և խոցելի խմբերի (ներառյալ երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց), հավաքների ազատության և խոսքի ազատության, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտներին:

3.ԵՄ երկկողմ քաղաքական ներգրավվածություն. 2022թ. նոյեմբերի 7-ին և 8-ին Բրյուսելում հաջորդաբար անցկացվել են ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների շուրջ երկխոսության 12-րդ հանդիպումը և ՀՀ-ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի 12-րդ՝ հերթական հանդիպումը: ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների շուրջ երկխոսության շրջանակում քննարկվել են մարդու իրավունքների ոլորտում առկա մարտահրավերները, մասնավորապես՝ խտրականության դեմ պայքարը, գենդերային հավասարությունը և գենդերահեն բռնությունը, երեխայի իրավունքները, աշխատանքային իրավունքները, հավաքների ազատությունը, արտահայտման և տեղեկատվություն ստանալու ազատությունը, ինչպես նաև արդարադատության անվտանգության և քրեակատարողական համակարգերին առնչվող մարդու իրավունքների պաշտպանության բնագավառները: ԵՄ-Հայաստան արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթահանձնաժողովի հանդիպման շրջանակում ընդգծվել է, որ արդարադատության ոլորտի ինստիտուտների գործունեության արդյունավետության պակասը, քաղաքականացված լինելը և ինստիտուցիոնալ անկախության բացակայությունը թեև դեռևս իրենց ազդեցությունն են թողնում դատական համակարգի վրա, Հայաստանը միաժամանակ լուրջ բարելավումներ է կատարել օրենսդրական դաշտում, որն արտացոլվել է բոլոր հիմնական ոլորտային ռազմավարություններում:

Հայաստանում գործող ԵՄ պատվիրակությունը և ԵՄ անդամ պետությունները շարունակում են խթանել մարդու իրավունքների և ժողովրդավարության հիմնական նպատակների իրականացումը: Հատուկ ուշադրության է հատկացվել ՀԸԳՀ կիրարկմանը և կառավարության կողմից ՀԸԳՀ իրականացման Ճանապարհային քարտեզի հետագա մշակմանը և հաստատմանը: ԵՄ-ն և ԵՄ նրա անդամ պետությունների ներկայացուցիչները տարբեր միջոցառումների, ինչպես նաև բարձր մակարդակի հանդիպումների ժամանակ հրապարակայնորեն բարձրաձայնել են մարդու իրավունքներին առնչվող խնդիրները՝ ի թիվս այլնի ընդգծելով խոցելի խմբերի պաշտպանության և խտրականության դեմ պայքարին ուղղված օրենսդրությանը հետամուտ լինելու անհրաժեշտությունը: ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմը, որը նախատեսված է ՀԸԳՀ շրջանակներում, մեկնարկել է 2022 թվականի սեպտեմբերի 1-ին: Այն թույլ է տալիս ինչպես ԵՄ, այնպես էլ հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպություններին մշտադիտարկել ՀԸԳՀ իրականացումը և ապահովում է Հայաստանի և ԵՄ-ի համար համատեղ աշխատանքային շրջանակ՝ ուղղված ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը:

4.ԵՄ ֆինանսական ներգրավվածություն. Եվրոպական միությունը արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանն աջակցող առաջնային դոնոր է. ԵՄ աջակցությունը ներառում է 30 մլն եվրո ընդհանուր արժողությամբ ընթացիկ բյուջետային աջակցության

ծրագիրը 2021-2023 թվականների համար, ինչպես նաև բյուջետային աջակցության ծրագրի 11 միլիոն եվրո արժողությամբ 2-րդ փուլը՝ 2023-2025 թվականների համար, որը կմեկնարկի առաջիկայում: Արդարադատության ոլորտում իրականացվող այլ ծրագրերին զուգահեռ՝ ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվել է երկամյա ծրագիր (ավարտվել է 2022թ. հունիսին)՝ որը միտված է եղել աջակցելու ՀՀ կառավարությանը՝ ապահովելու օրենքի գերակայության և կոռուպցիայի դեմ պայքարի օրակարգի առաջխաղացումը, ինչպես նաև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումը:

Ծրագրի շրջանակում աջակցություն է տրամադրվել ՀՀ արդարադատության նախարարությանը և այլ համապատասխան շահագրգիռ կողմերին՝ բարձրացնելու արդարադատության որակը՝ համապատասխանելու անկախության, արդյունավետության, ամբողջականության, հաշվետվողականության և թափանցիկության պահանջներին՝ ՀԸԳՀ առաջնահերթություններին և ԵՄ լավագույն փորձին համահունչ:

Զուգահեռաբար մի շարք ԵՄ անդամ երկրներ աջակցություն են ցուցաբերել մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտում իրականացվող ծրագրերին: «Հայաստանում արդարադատության ոլորտի մշտադիտարկում» ծրագրի շրջանակում 2022 թվականի փետրվարին մեկնարկել է «Juremonia» հարթակ ծրագիրը, որն իրականացվում է Նիդեռլանդների հելսինկյան կոմիտեի կողմից: Ծրագրի նպատակն է խթանել իրավազորված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որպես արդյունավետ, արժանահավատ կայուն անկախ դերակատարների իմաստալից դերը Հայաստանի արդարադատության ոլորտի, այդ թվում՝ ոստիկանության և քրեական արդարադատության բարեփոխումներում՝ նպաստելու ավելի հաշվետու, թափանցիկ և մարդու իրավունքներին համապատասխանող միջազգային արդարադատության համակարգի ստեղծմանը:

2022 թվականին մեկնարկել են քաղաքացիական ակտիվությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև ԶԼՄ-ների աջակցությանն առնչվող մի շարք նոր ծրագրեր: Ստորագրվել են նոր դրամաշնորհային պայմանագրեր, այդ թվում՝ «ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում (ՀԱՎԱՍԱՐ)» պայմանագիրը, որը ստորագրվել է 2022 թվականի վերջին: Ծրագիրը միտված է բարձրացնելու կանանց դերը և իրավազորելու նրանց՝ երկրում սոցիալական փոփոխությունների հասնելու համար՝ ուշադրությունը կենտրոնացնելով հատկապես մի քանի մարզերի ուղղությամբ, ներառյալ՝ Սյունիքը, Լոռին և Տավուշը:

5.Բազմակողմ համատեքստում Հայաստանը շարունակել է կատարել մարդու իրավունքների ոլորտում ստանձնած իր միջազգային պարտավորությունները:

2022 թվականի փետրվարին տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի ներկայացուցիչների այցը Հայաստան: Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարման վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույցը քննարկվել և ընդունվել է 2022 թվականի հոկտեմբերին՝ ՄԱԿ-ի Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի հետ երկխոսության շրջանակում: Հայաստանի կողմից ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի համաձայն՝ կամավոր ներկայացվող երրորդ միջանկյալ զեկույցի վերաբերյալ հանրային քննարկումը տեղի է ունեցել 2022 թվականի դեկտեմբերին: Հայաստանի՝ որպես 2020-2022թթ համար Մարդու իրավունքների խորհրդի անդամի անդամակցության երկամյա ժամկետը ավարտված է: